ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՐԻ ՀԵՏ ՄԻՇՏ ԱԶՆԻՎ ՄՆԱՑԱԿԱՆ ԿԼԵԿՉՅԱՆԸ՝ ՆՈՒՅՆ ԻՆՔԸ ՎԱՐՊԵՏ ՄՆՈՆ

Մեր վարպետները հնուց տուֆ են սիրել ու մարմար,
Շունչ ներշնչող են եղել կարծր քարին ու հողին.-
Մեր վարպետները հնուց երգ են սիրել ու պայքար,
Մահ են բերել անքանքար , բութ ու տխմար տիրողին.-
Ես խոնարհում եմ գլուխս հանճարի առջև ձեր անճառ,
Ո՜վ վարպետներ, ով տվիք –ձև, կերպարանք մեր հողին…

Եղիշե Չարենց

…Հայկական Լեռնաշխարհ: Սա աշխարհի այն մեծ անկյունն է, ուր ձևավորվել և իր պատմական դժվարին ուղին է անցել հայ ժողովուրդը: Երևի Աստված գիտեր, որ միայն Հայը կարող է կենդանի շունչ և գեղագիտական արժեք պարգևել Քարին, և մեզ տվեց այս սրբազան հողը: Հայ վարպետը ձեռքն առավ բրիչը, և քարերը ըսկսեցին խոսել ու երգել: Սա ա յն երկիրն է, որտեղ ծնունդ առան հանճարեղ կոթողներ, իսկ դրանց հորինվածքների և զարդանախշերի սկզբունքները հասան աշխարհի չորս ծագերը…

Հին վարպետների թողած ավանդույթներն այսօր էլ կենդանի են սերունդների հիշողության մեջ: Տարիներ առաջ Վանաձորում ծնված մի շնորհալի տղա իր ձեռքըն առավ քարը հղկող գործիքները…Վարպետներից մեկը նկատեց նրա բնատուր շնորհը և ուղղեց իր պատգամը *«Քարը դերասանություն և կեղծավորություն չի սիրում: Քարի հանդեպ պետք է ազնիվ ու խելացի լինես»*: Եվ տարիներ անց նրա ձեռքի տակ ըսկսեցին ծնունդ առնել գեղեցիկ շենքեր, շինություններ, խաչքար-հուշարձաններ, խաչքարեր, նոր տեսք ստացան քաղաքի այգիներն ու մանկական խաղահրապարակները: Այդ պատանին Մնացական Կլեկչյանն էր այսօր արդեն հայտնի քարագործ Վարպետ Մնոն: Մենք նրա հետ զրուցել ենք իր անցած ճանապարհի, սերունդներին նախնիներից ավանդված արժեքներով կրթելու, դաստիարակելու խնդիրների և քարագործության արվեստը պահպանելու ուղիների մասին:

– Հարգելի վարպետ, աշխարհի հիշողության մեջ Հայաստանը քարերի երկիր է:Անգամ հայ գրողներից Վարդգես Պետրոսյանը մեր երկիրը կոչել է ,Հայաստան-Քարաստան: Ինչպե ս է մեր նախնիներին հաջողվել շունչ ու ոգի տալ քարին ևվեր խոյացնել մշակութային վեհաշուք կոթողներ…

– Այո, աշխարհում եզակի երկիր է Լեռնային Հայաստանը՝ իր ունեցած քարերի տեսակներով, գույներով ու երանգներով: Հայաստանի տարածքը ամբողջապես ծածկված է հրաբխային քարանյութերի համատարած շերտերով: Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից քարն օգտագործել է կյանքի բոլոր բնագավառներում: Ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը գրել է. «Քարի վրա է ծընվել հայը, քարի վրա է ապրել, քարով ապրել, քարը քարին դրել, քարերի վրա բարձրացել, քարեր բարձրացրել: Քարերի մեջ է աճել մանուկը, քարով խաղացել, քարն իմացել, քարի պես ամրացել»:

Դեռ Սովետական Միության ժամանակ Հայաստանի՝ ընդամենը մոտ 30 հազար կմ2 տարածքում տուֆաքարերի երկրաբանական պաշարները գնահատվել են ավելի քան 2.3 միլիարդ մ3: Ամբողջ Սովետական Միության տուֆաքարի հետազոտված պաշարների ավելի քան 90% գըտնվում է Լեռնային Հայաստանի տարածքում: Եվ լայնամասշտաբ շինարարության համար քարատեսակների հումքի 95%-ը մատակարարել է Հայաստանը:

Հայաստանի տուֆաքարերից հայտնի է 5 տեսակ Անիական տիպի տուֆ (անիտուֆ), Արթիկյան տիպի տուֆ (արթիկտուֆ), Երևանյան տիպի տուֆ (երևանտուֆ), Բյուրական տիպի տուֆ (բյուրականտուֆ), Ֆելզիտային տիպի տուֆ (բելզիտ):

Այս 5 տեսակի տուֆաքարերը ունեն 350-ից ավելի գունային երանգներ: Ինչպես մեր նախնիներին է հաջողվել քարին շունչ ու ոգի տալ, նույնը կատարվում է այսօր: Ես, որպես հայ քարագործ, քարը համարում եմ իմ մարմնի մի մասնիկը, քանի որ քարի հետ աշխատում եմ ամբողջ օրը առավոտից մինչ երեկո, նաև քարի հետ ճաշում, քարի փոշի շնչում, նույն փոշին էլ մաշկովս ներս է թափանցում: Մի պահ ինձ թվում է՝ իմ երակներում քարի փոշի է հոսում: Քարի հետ խոսում եմ այնպես, ինչպես մարդը մարդու հետ կխոսի ու վիշտը կկիսի: Քարի փոշին՝ քրտինքիս հետ միախառնված ճակատիցս կաթում է քարի վրա: Քարին այնքան եմ բռնում, բարձրացնում, շրջում, կրծքիս սեղմում ու շոյելով վրայի փոշին սրբում, որ մատներիս ծայրերի մաշկը մաշվում, միսս բացվում, ու Քարն արյունոտվում է: Այսպիսով իմ մարմնի մեջ է ներծծվում Քարն իր ողջ էությամբ… Մենք ես և Քարը, ասես, միաձուլվում և դառնում ենք միասնություն ու մեկ մարմին, մեկ շունչ: Այսպիսով Քարին շունչ ու կյանք եմ տալիս, ի վերուստ ժամանակավոր ինձ տրված կյանքիցս՝ ու ինձանից կյանք ստանալով՝ հավերժանում Իր հետ հավերժացնելով ինձ ու իմ անունը:

– Հայ ժողովուրդն այն եզակի ազգն է, ով ստեղծել է Հոգևոր մայրաքաղաք ի դեմս «հազար ու մի եկեղեցիների» քաղաք Անիի: Ի՞նչ խորհուրդ ունի այս փաստը Ձեզ համար որպես հայ քրիստոնյա:

– Քարը միշտ ուղեկցել է Հային՝ իր հազարամյակների պատմության ամբողջ ժամանակաշրջանում: Դեռ մեր թվարկությունից շատ առաջ հայերը բազալտաքարն օգտագործել են բնակավայրեր, պարիսպներ, ամրոցներ, կամուրջներ և այլ շինություններ կառուցելու համար: Պատմական Հայաստանի բոլոր վայրերում կանգուն ու կիսականգուն վիճակում պահպանվել են բազալտից կամ տուֆից կառուցված հայկերտ ճարտարապետական կոթողներ:

– Հայաստանի երկնքի ներքո սփռված են հազարավոր ճարտարապետական կոթողներ, որոնք դիմացել են դարերի փորձությանը: Կարո ղ եք նշել, թե որոնք են՝ Ձեզ առավել հոգեհարազատ թե գեղագիտական ըն կալումների և թե ստեղծագործական ներշնչանքի առումով:

– Ես բազմիցս նշել եմ, որ Լեռնային Հայաստանը քարակերտ կոթող-թանգարան է բաց երկնքի տակ հենց Աստծո աչքի առջև, իսկ մենք թանգարանի աշխատողներն ենք ու Աստծո խոնարհ ծառաները:

Հայաստանի տարածքում պահպանվել են հնագույն ժամանակներից մեզ հասած ավելի քան 4000 քարակերտ հուշարձաններ: Այդպիսի հուշարձաններ ավելի շատ սփռված են Պատմական Հայաստանի մյուս մասերում: Քարը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի դարերի խորքերից եկող հոգևոր ու մշակութային գանձերը մեզ հասցնելու գործում: Մեր նախնիները Քարի վրա են արձանագրել պատմական կարևորագույն դեպքերն ու իրադարձությունները: Բերենք մեկ օրինակ. Արին-Բերդի պեղումների ժամանակ 1950թ. սեպտեմբերի 25-ին հայտնաբերվել՝ է Երևանի ծրննդյան վկայագիրը՝ Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը բազալտաքարի վրա: Այն մեզ հաղորդում է, որ մ.թ.ա. 782 թվականին Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա-ն հիմնադրել է Էրեբունին: Այս քարագիր արձանագրությունը նաև վկայում է. «Խալդ՝աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց ու անվանեց Էրեբունի քաղաք ի հզորություն Բիայնա երկրի և ի սարսափ թշնամիների»: Էրեբունին կառուցելու մասին Արգիշտին հիշատակություն է թողել նաև 1916թ.-ին Վանի մոտ հայտնաբերված հանրահայտ արձանագրությունում, որը սեպագրված է ժայռի վրա: Հայաստանի պատմության թանգարանում պահվում է նաև բազալտի վրա մ.թ.ա. VIII դ. Սարդուր II-ի հրամանով գրված սեպագիր արձանագրությունը, որտեղ խոսվում է այգետունկի մասին:

– Ամեն անգամ, երբ լսում եմ որևէ շնորհաշատ վարպետի ոսկերչի, արծաթագործի, հյուսնի, շինարարի մասին, հիշում եմ գրրող և բանաստեղծ Շահեն Թաթիկյանի այս տողերը.

Իմ տատիկը անուսում,
Ինձ միշտ այսպես էր ասում.
«Ապրե ս, բալիկ, մեծանաս
Ոսկի ձեռքեր ունենաս»:

Հիշու՞մ եք, թե ումից ստացաք Ձեր առաջին օրհնությունը և ո՞վ Ձեզ ուղղորդեց շինարարության և քարագործության հետաքրքիր ու բազմախորհուրդ ոլորտ:

– Հայրիկս մասնագիտությամբ հյուսն էր: Ես էլ մանկուց սիրել եմ օգնել ու միշտ լինել հայրիկիս կողքին: Արդեն 1990-ականների սկիզբն էր: 12-13 տարեկան էի, երբ բակի երեխաներով մեկ-մեկ այցելում էինք մեր թաղամասում գործող քարի վերամշակման արտադրամասեր, հետևում, թե ինչպես են քարագործ վարպետները քարը կտրում, հղկում, փայլեցնում, տաշում ու շարում: Պարզապես առաջին իսկ հայացքից իմ հոգում սեր ծնվեց դեպի այս հնավանդ արվեստը: Յուրաքանչյուր այցից հետո ավելի ու ավելի էի սիրահարվում այդ՝ ֆիզիկապես ծանր, տանջալից, փոշոտ գործին, քան թե փայտի մշակմանն ու փայտարվեստին: Մկսեցի ավելի հաճախ այցելել քարի արտադրամաս ու կամաց-կամաց ծանոթանալ վարպետների հետ: Քանի որ երեխա էի, վարպետները թույլ չէին տալիս մոտիկ գնալ էլեկտրասարքավորումներին: Ես էլ՝ նստում էի՝ տաշող վարպետների կողքին և ուշադիր նայում նրանց ձեռքերի շարժումներին:

Մի օր էլ փորձեցի ինքս տաշեմ ու լավ ստացվեց, թեպետ ներքուստ վախենում էի քարը փչացնել: Այդ պատճառով մուրճով կամաց էի խփում զուբիլին: Մի վարպետ պապիկ տեսնում է իմ շնորհքն ու ձգտումը քարարվեստի նկատմամբ, և մի օր, երբ իր գործիքով էի քարը տաշում, ինքն էլ կողքիս նստած ծխում էր, ասաց. «Տղա ջան, ուժեղ խփի զուբիլին, չվախես, ոնց որ քարը՝ ուզում ա, էդպես էլ խփի… մի՛ վախի, քարը չի կոտրվի, քարը վախկոտ մարդուն չի սիրում, քարը դերասանություն և կեղծավորություն չի սիրում: Քարի հանդեպ պետք է ազնիվ ու խելացի լինես, ուժեղ ու դուխով լինես, քեզ ազատ պահի, մի լարվի ու ազատ աշխատի»: Այս խոսքերն, իսկապես, ինձ քաջալերեցին, նվիրում արթնացրին, ու ավելին՝ խորասուզվեցի այդ աշխարհի մեջ: Այսպիսով սկսեցի իրենց համար աշխատել, ինձ համար սովորել, մեկ-մեկ էլ գումար վաստակել: Շաբաթներով քարեր էինք տաշում ու տաշում, որ մի գերեզման սարքենք: Այն ժամանակ չկային այժմյան զարգացած տեխնիկաները: Այցելելով տարբեր արտադրամասեր սովորեցի քար կտրել, ծակել, տաշել, հղկել, փայլեցնել և այլ աշխատանքներ: Սովորեցի նաև գերեզմանաքարի վրա նկար, տառեր ու թվեր արտատպել: Բանակից զորացրվելուց հետո աշխատեցի տարբեր արտադրամասերում: Շինարարական հիմնարկներում ու մասնավոր բրիգադներում աշխատելով խելացի ու բանիմաց պրարաբների, ինժեներների ու անվանի վարպետների հետ նորանոր գիտելիքներ ու փորձ ձեռք բերեցի: Ցավով եմ նշում, որ վարպետներիցս շատ-շատերն էլ չկան: Աստված նրանց հոգին լուսավորի: Ինձ համար տուն կառուցելը աշխարհի ամենասուրբ գործն է: Մեր քաղաքում հիմքից տներ եմ կառուցել, տարբեր շենքեր ու շինություններ: Հիմա կարող եմ ասել, որ Վանաձորում գրեթե չկա մի փողոց, որտեղ ձեռքս դիպած չլինի, քար տաշած ու շարած չլինեմ: Հիմա էլ սկսել եմ զբաղվել խաչքարագործությամբ: Մեր ազգային ավանդական խաչքարագործության գաղտնիքներին և բարդ նախշատեսակներին եմ ծանոթանում ու սովորում անվանի արվեստագետ ու խաչքարագործ, Վարպետ Բոգդան Հովհաննիսյանի մոտ: Ինչքան էլ մարդը լավ մասնագետ լինի, էլի սովորելու կարիք ունի և սովորելը երբեք ու երբեք ուշ չի:

– Դուք նաև ստեղծում եք փոքր մակետներով խաչքարեր, որպեսզի ամեն հայ որպես հուշանվեր դա ունենա իր տանը, աշխատավայրում… որպեսզի Աստծո օրհնությունը նրա հետ լինի: Վաղու ց եք իրականացնում այս գաղափարը:

– Հիմնականում խաչքարագործությունը խորությամբ ուսումնասիրել սկսել եմ անցած տարվանից նպատակ դնելով տարածել ու սովորական ավանդույթ դարձնել տուֆից քանդակած փոքրիկ խաչքար ունենալը բնակարանում և գրասենյակում: Խաչը ոչ թե կրել միայն պարանոցից կախված, այլ ամենուրեք լինի մեր աչքի առաջ: Խաչքարը՝ տեսնելով մարդ զգաստանում է՝ գիտակցելով, որ Աստծո Միածին Որդին հենց այդ խաչի վրա գամվեց, աննկարագրելի տառապանք կրեց և Իր Սուրբ Արյունը թափեց մեր մեղքերի թողության համար… Մարդն արդեն դառնում է աստվածավախ: Իսկ եթե մարդ արարածը աստվածավախ չէ, աստվածապաշտ լինել չի՝ կարող: Աստվածավախ լինելով՝ նաև իրենք են հեռու մնում չար գործերից: Բնակարաններում խաչքար ունենալով՝ ընտանիքում տիրում է աստվածային սեր ու համերաշխություն, նորանոր հաջողություններ է բացվում ընտանիքի անդամների առջև: Խաչքարը «տեսնելով» բնակարանից փախչում են ընտանիքին անհաջողություն բերող չար ուժերը: Քրիստոնյաներին խորհրդանշող խաչն իր շուրջն է սփռում աստվածային Լույսն ու Հույսը, Սերն ու Համերաշխությունը հայի սուրբ օջախներում:

Զրուցեց Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆԸ